ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

29 Հոկտեմբեր 2009, 1290 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի N 586-Ն ԵՎ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-Ի N 1486-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 14-ի "Գնահատման և թեստավորման կենտրոն" պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և "Գնահատման և թեստավորման կենտրոն" պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին" N 586-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշման 5-րդ կետում և որոշման հավելվածի 14-րդ, 16-րդ կետերում "կրթության և գիտության նախարարություն" բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել "կառավարության աշխատակազմ" բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով.

2) որոշման հավելվածի՝

ա. 18-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

"18. Կազմակերպության գործադիր մարմնի թեկնածուների առաջադրումը և ընտրությունը կատարվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:",

բ. 20-րդ կետում "15" թիվը փոխարինել "14" թվով,

գ. 20-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ "ա.1" ենթակետով.

"ա.1. մեկ ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմից",

դ. ուժը կորցրած ճանաչել 20-րդ կետի "ե" և "զ" ենթակետերը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 27-ի "Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն" հիմնադրամ ստեղծելու, "Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն" հիմնադրամի կանոնադրությունը հաստատելու, նախնական, միջին և բարձրագույն մասնագիտական կրթության գծով հավատարմագրման փորձաքննություն իրականացնելու լիազորություն տալու և Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 20-ի N 1540-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի

Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը գումար հատկացնելու մասին" N 1486-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետում և որոշման հավելվածի 8-րդ կետում "կրթության և գիտության նախարարություն" բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել "կառավարության աշխատակազմ" բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով.

2) որոշման հավելվածի 20-րդ կետում՝

ա. "14" թիվը փոխարինել "13" թվով,

բ. 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

"1) մեկ ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավարի ներկայացմամբ.".

գ. 2-րդ ենթակետում "2" թիվը փոխարինել "1" թվով:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել սույն որոշման 1-ին և 2-րդ կետերում նշված իրավաբանական անձանց կանոնադրություններում սույն որոշումից բխող փոփոխությունների պետական գրանցումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: